

ԱՐՏԱԿ ՄԱՂԱՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

ՂԱՐԱԲԱՂԻ ԻԲՐԱՀԻՄ ԽԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր՝ Իբրահիմ խան, մայոր Դ. Լիսանելի, Մելիք-Ջումշուդ, Արցախի մելիքություններ, Ղարաբաղի խանություն, Պ. Ցիցիանով, Ի. Գուլի խան, պետական դավա-ձանություն:

1806 թ. մայիսի 27-ի գիշերը՝ պարսից բանակին միանալու փորձի ժամանակ, ոռուսական բանակի մայոր Դ. Լիսանելի կողմից սպանվեց Ղարաբաղի իբրահիմ խանը¹: Ղարաբաղի խանության վեզիր և պատմագիր Միրզա Ջամալ Ջևանշիրը, հակիրճ ներկայացնելով նրա սպանությունը, գրում է, որ պարսկական զորքերի մոտենալուն պես «իբրահիմ խանը Խանքաղիում գտնվող իր ընտանիքը տեղափոխեց ամրոցի (Շուշի - Ա. Մ.) մոտ գտնվող մի տեղ: Որոշ շարամիտ անձինք այնպես զրպարտեցին նրան մայորի (Դ. Լիսանելի - Ա. Մ.) մոտ, որ վերջինս գիշերով մի զորացոկատով գնաց նրա կացարանը, որտեղ էլ ճակատագրի չար կամքով սպանվեց իբրահիմ խանն իր ընտանիքի որոշ անդամների և մերձավորների հետ»²: Հստ Միրզա Ջամալի որդու՝ Խրակովի բեկ Միրզա Ջամալովիշի, իբրահիմ խանից բացի սպանվածների մեջ էին նրա կին Թուրքա խանումը, գուստը Սալթանաթ բեգումը, խանի տասներկուամյա որդին և սարշալու ցեղախմբի վերնախավի մի խումբ ներկայացուցիչներ՝ թվով տասնյոթ հոգի³: Դժվար չէ նկատել, որ Միրզա Ջամալն ամեն կերպ ցանկացել է սքողել կամ մեղմել իբրահիմ խանի խորամանկ քայլի ծանր հետևանքները:

Միրզա Ջամալի մատնանշած «շարամիտ անձանց» մեջ գլխավոր դերը վերապահված էր Վարանդայի Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանին, քանի որ հենց նա էր մայոր Լիսանելիին տեղեկացրել իբրահիմ խանի՝ պարսկական բանակին

¹ Իբրահիմ խանի սպանության մասին տե՛ս *Акты, собранные Кавказской археографической комиссией* (այսուհետև՝ АКАК), տ. III, Тифлис, 1869, д. 610, с. 334-335:

² **Мирза Джамал Джеваншир Карабагский, История Карабага, Баку, 1959, с. 96.**

³ Նույն տեղում, էջ 96-97:

միանալու մտադրության մասին⁴: Սակայն խանի, մայորի և մելիքի ճակատագրական հանդիպմանը նախորդել էր բուռն իրադարձություններով հարուստ մի տասնամյակ, որն իր անխուսափելի կնիքն էր դրել 1806 թ. մայիսյան այդ գիշերը տեղի ունեցած դեպքի վրա:

1792 թ. ախրահուշակ Մելիք-Շահնազարի մահից հետո նրա որդիների միջև թեժ պայքար է սկսվում Վարանդայի մելիքի պաշտոնին տիրանալու համար: Մելիք-Շահնազարն ամուսնացել էր երեք անգամ: Այդ մասին տեղեկանում ենք Արցախի մելիքների կանանց և որդիների մասին Բաղդասար մետրոպոլիտի 1849 թ. մի գրությունից, որտեղ նրա ընտանիքի մասին ասվում է հետևյալը. «Վարանդու Մէլիք Շահնազարն ունէր ինքեան զառաշին օրինաւոր կին Թաջում անուն, յորմէ և ծնեալ է օրինաւոր որդի նորա Մէլիք-Ջիւմշիւն: Զկնի մահուան յիշեալ Թաջումին, Մէլիք-Շահնազարն էառ առ ինքն ի կենդանի առնէ զկինն Սօնայ և ընդէմ օրինաց պսակեցաւ ընդ նմա, յորմէ և ծնեալ է որդի նորա Մէլիք-Հիւսէինն, որոյ և ժառանգը գտանին այժմ յԱւետարանոց գելզ: Ի կենդանութեան նոյն Սօնայ ապօրինաւոր կնոշն Մէլիք-Շահնազարն կրիւք բղջախոհութեան (ցանկասիրությամբ – Ա. Մ.) ամուսնացաւ ընդ օրիորդին Մալակայ, գտտեր հարազատ եղբօր հանգուցեալ կնոշն իւրոյ Թաջումի, և յայսմ ապօրէն ամուսնութենէ ծնեալ են Զահանբախշն և Զահանկիրն, որոց ժառանգը ևս գտանին յԱւետարանոց»⁵: Ակնհայտ է, որ Մելիք-Շահնազարի երեք ամուսնություններից ծնված որդիները չեն կարող հաշտ ու համերաշխ լինել: Դեռ ավելին, նրա երկրորդ և երրորդ ամուսնություններից, կամ ինչպես ժողովրդի գիտակցության մեջ է արմատացած՝ ապօրինի կապերից ծնված լինելու հանգամանքը ամենելին էլ չի խանգարել, որ Մելիք-Շահնազարի այդ զավակները ևս ունենան Վարանդայի մելիք դառնալու հավակնություններ: Հայտնի է, մասնավորապես, որ Հուսեինը, որի քույր Հուրիվատ խանումը իբրահիմ խանի կինն էր, վերջինիս աջակցությամբ ցանկացել է դառնալ Վարանդայի մելիք:

Այնուամենայնիվ, Մելիք-Շահնազարի ավագ որդի Մելիք-Ջումշուդին հաջողվել է տիրանալ գավառի իշխանությանը: Որպես ասվածի ապացուց նշենք, որ պահպանվել է Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի՝ 1794 թ. օգոստոսի 8-ին նրան ուղղ-

⁴ АКАК, т. III, д. 610, с. 334, Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1987, էջ 553:

⁵ Մեւրով Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Կաթողիկոսական դիվան, թղթ. 150, վավ. 839, թ. 3–4, բնագիր, կամ՝ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813–1933 թթ.), կազմեց՝ Ս. Բէհրուդեանը, Երևան, 2001, էջ 180, տե՛ս նաև ձեռ. ՄՄ 7429, էջ 8թ, որտեղ կարդում ենք. «Մելիք Շահնազարն ունեցաւ 3 կին. Առաջին բակած կնկանից ծնաւ Մելիք Զիմշուղն. Երկրորդ խանմից՝ Հուսեինն, երրորդ բակօվեց՝ ծնաւ Մելիք Զիանբախշն, Զիանգիր աղան»:

ված ցալակցական նամակը, որպես «միսիթարութիւն վասն մահուան հօրն, և շնորհաւորութիւն յաջորդելոյն իւրոյ զիշխանութիւն նորին»⁶: Մելիք-Ջումշուդն իշխանության է եկել իր հոր աջակցությամբ ստեղծված Ղարաբաղի խանության դեմ անհաշտ պայքար մղելու վճռականությամբ:

Վարանդայում Մելիք-Ջումշուդի իշխանության գալը համընկավ Իրանի արյունարրու տիրակալ Ղաջարական հարստության հիմնադիր Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների ժամանակաշրջանի հետ: Վերջինս 1797-ին երկրորդ անգամ է արշավում Անդրկովկաս: Իբրահիմ խանը, երկուղելով նրա դատաստանից, ընտանիքով փախչում է Թաղստան՝ իր աներ Օմար խանի մոտ: «Իբրեւ լուսւ Աղա Մամատ շահն, — գրում է շուշշոյի պատմագիր Հակոբ Զաքարյանը, — թէ փախեաւ ապստամբեալ խանն իբրահիմ ի քաղաքէ Շուշոյ՝ ել եւ եկն տիրեաց նմա առանց բանի պատերազմի: Եւ ետ ածել զառաջեաւ զամենայն իշխանն հայոց՝ եւ շարչարեալ զնոսա բազմատեսակ տանջանօք, զի զստոցն ասացեն զորքանութենէ յընչից իւրեանց»⁷: Խակ ինչպես գրում է հայ պատմագիր Ներսեսովը. «Զերբակալվածների մեջ էին Վարանդայի Մելիք Շահնազարի որդի Մելիք Ջումշուդը, Մոլլա Փանահ Վաղիֆը և շատ ուրիշ ազնվականներ ու իշխանավորներ, որոնք բանտ են նետվում»⁸:

Մելիք-Ջումշուդը, Աղա Մուհամմադ խանին 70.000 ո. տուգանք տալով, հազիվ է ազատում իր գլուխը⁹ և, օգտվելով վերջինս անակնակալ սպանությունից, նախքան իբրահիմ խանի վերադարձը, իր քրոջ որդու՝ Գյուլիստանի Մելիք-Ֆրեյդունի հետ փախչում է Վրաստան: Այս գեազերի մասին հիշատակություններ են թողել նաև իրենք՝ փախստական մելիքները: Այսպես, Մելիք-Ջումշուդի՝ 1798 թ. գեկտեմբերի 23-ին գրված և Պավել I կայսրին ուղղված խնդրագրում կարդում ենք. «Յորժամ իսկ եկն ի Շիրուան յաղթագիեաց ոռւսացըն զօրօք գրաֆ Ջուբօվըն և առաքեաց առ իբրահիմ խալիլ խանն Ղարաբաղու վասն ոմանց գործոց զմայօր Կաճկաճօվըն, հրամայելով նմա յայնժամ ի ծածուկ զի՞ւ զմէլիք Ջիմշիտըս, ընդ այլոց անդ եղելոցն պարաւանդել զիս երդմամբ ի յին առ ամենայն ոռւսաց աթոռն կապակցութիւն և զայնմանէ տեղեկացուցանել նմա: Ուստի ես ըստ որում ի վաղուց ցանկայի այնմ ուրախութեամբ ընդ առադրեալն նոյն մայօրին, առաջի սրբոյ Աւետարանին և կենարար խաչին ի բերանուց ամենիցն որպէս նախագահ ի նմա արարի երդումն և ուխտեցի ընդ գալ գրաֆ Ջուբօվին յաղթագիեաց զօրօքըն ոռւսաց ի յեզր Կուր գետոյն ժողովեալ զօրու իմ և ցուցանել ի կողմանէ իմմէ զամենայն զհարկաւոր

⁶ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 57, գ. 3, գ. 1, թ. 90, տե՛ս նաև Դիւան հայոց պատմութեան, զիրք Դ, Ղուկաս կաթողիկոս (1780–1800), Թիֆլիս, 1899, էջ 639–640:

⁷ Ա. Մալաթեան, «Յակոբ Զաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատութիւնը», ՀԱ, Վիեննա–Երևան, 2006, թի 1–12, էջ 351:

⁸ Միքայ Յոստֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Երևան, 2000, էջ 74:

⁹ Արմաно-ռուսական հայության պատմություն, Երևան, 1990, ս. 461.

նպաստս ըստ կարողութեան իմոյ, թէ նպարօք և թէ այլօվք, որ ինչ պիտոյն է: Բայց ի նոյնում իսկ ժամանակի, երբ մեք առ այն պատրաստեալ կայաք, զօրացն ոռուաց տրեալ էր հրաման վերադառնալ ի նորասատան: Եւ երբ զօրքն ելին թշնամիքն մեր փոյթ ընդ փոյթ զգացուցին հբրաճիմ խալի խանին որպէս զարարեալ էրդմանէն իմմէն, յանուն ամենիցն, նոյնպէս և գտուեալ խօստմանէն:

Ուստի և նա վաղվաղակի կոշեաց զիս՝ զմէլիք Զիմշիտս, առ ինքն և բարկութեամբ սրտմտեալ անուանեաց զիս երկմիտ և պնտէր, որպէս թէ ես ըստ ամենայնի ընդ յաղթազգեաց զօրացն ոռուաց երգուեալ եմ վասն պատճառելոյ զվնասարարութիւն նորայ, վասն որոյ և զկնի այնմ էտո յինէն բոնի զամենայն ինչս իմ, ոչ միայն զիրս թանկագինս՝ զոսկի և զարծաթ, այլև զանասունս զիս սէպականեալս, և զիս զինքնս ևս դատապարտեալ կամեցաւ մատնել ի մահ: Բայց ըստ իմ բաղտին, ի նոյն ժամանակի եկն ի Ղարաբաղ զօրօք Աղայ Մահմատ խանն և նոյնոյ իսկ հբրէճիմ խալի խանն երկուցեալ, էտո յինքն զկին իւր և զորդիս և փախեաւ ի Դաղստան:

Ուստի և Աղայ Մահմատ խանին մտեալ յամրոցն Շուշի՝ զմնացեալ ինչս իմ զթագուցեալս զգուշութեամբ, յափշտակեալ էտո յինէն, զկնի որոյ և ինքն ի նոյնում ամրոցի սպանեալ եղեւ, իսկ ես ըստ վէրոյ գրելոցն՝ երկուցեալ ի դառնալոյ հբրէճիմ խալի խանին, տեսանելով զյարմար դիպուած ի փրկել զիս, թողեալ զտունս, զգաւասս և զամենայն զհպատակս իմ, բռնադատեալ եղէ անտի որդով իմով Պողոսի և քեռորդովն մէլիք Փիրիդոնի և իւզբաշի Պետրոս բէգիւն աստ ընդ իս եղելօվքն հանդերձ նմանապէս և կնաւս և այլօվք զավաքոքս գրեթէ մերկ փախչիլ առ յաղթազգեաց զօրքն ոռուաց, որ ի Վիրու»¹⁰:

Ահա նաև Մելիք-Ֆրեյդուն Մելիք-Բեգլարյանի վկայությունը. «Ի յարձակելն ի վերայ Ղարաբաղու Աղայ Մահմատ խանին, յորմէ և տանջօղն՝ հբրաճիմ խալի խան, եղեւ բռնադատեալ փախչիլ առ լէզկին և ի մերկանալն ի նմանէ ըստ մնացեալ գոյից բարերարին իմոյ և գերապատուելի մօրեղբայր մէլիք Զիմշիտին և ի սպանանելն Աղայ Մահմատ խանին ի Ղարաբաղ ի յիւրոցն, ես յիշեալ մօրեղբայրին իմով փախեայ անտի ի Վիրու»¹¹:

Այս փաստաթղթերից ակնհայտ է դառնում, որ Մելիք-Զումշուդը կապ է հաստատել 1796 թ. Պարսկական արշավանքի հրամանատար կոմս Վ. Զուբրովի հետ, ինչն էլ ոռուական զորքերի վերադարձից հետո հարուցել է հբրաճիմ խանի խիստ զայրություն: Եվ, անտարակուս, մելիքները կկիսեին 1780-ական թթ. կեսերին հբրաճիմ խանի կողմից նույն մեղադրանքով նահատակված Գանձասարի Հովհաննես կաթողիկոսի և Դիոզակի Մելիք-Բախտամի ճակատագիրը, եթե շիներ Աղա Մուհամմադ խանի 1797 թ. արշավանքը, որի անակնակալ սպանությունը մելիքներին հնարավորություն տվեց փրկվել հբրաճիմի վրիժառությունից:

¹⁰ Նոյն տեղում, էջ 493-494:

¹¹ Նոյն տեղում, էջ 491:

Մելիք-Ջումշուդի Արցախից հեռանալու մասին գրում է նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցին հնդկահայ նշանավոր գործից Շ. Շահամիրյանին հասցեագրված նամակում. «Այլ յետ ներքինոյ կործանմանն մելիք Ջումշուտն կասկածեալ յիբրահիմ խանէն, որ դառնալոց էր ի Կովկասու, ամենայն տամբն խոյս ետ ի Տփիսիս»¹²: Պետք է նշել, որ մելիքների հեռանալը հայրենիքից խարխլեց Խամսայի մելիքությունների հիմքերը և, ընդհակառակը, ամրապնդեց Իբրահիմ խանի դիրքերն Արցախում:

1797–1798 թթ. Արցախում սով է սկսվում, որին հաջորդում է ժամանախտը: Քաղցից ու համաճարակից փրկվելու նպատակով մելիքների հպատակները, հիմնականում Գյուլիստան և Վարանդա գավառների ազգաբնակչությունը, ևս գաղթում են Վրաստան: Այնտեղ սովատանը հայ ազգաբնակչությանը վատ են ընդունում: Վրաց ազնվականությունից հուսախաք՝ 1799 թ. Մելիք-Ջումշուդը և Մելիք-Ֆրեյդունը գնում են Ս. Պետերբուրգ՝ անձամբ աղերսամատուց լինելու կայսրի մոտ իրենց պահանջների մասին: Պավել I-ի 1799 թ. հունիսի 2-ի հրովարտակի համաձայն՝ Գյուլիստանի Մելիք-Աբովյին է տրվում Բոլնիսի գավառը, Մելիք-Ֆրեյդունին՝ Աղակալան և Բորչալուի մի մասը, իսկ Բորչալուի մնացած մասը և Լոռին վրաց Գեորգի XII թագավորի՝ 1800 թ. փետրվարի 29-ի հրովարտակով տրվում է Մելիք-Ջումշուդին՝¹³:

Սակայն Արցախի մելիքների գերը Վրաստանում, հատկապես վրաց Գեորգի XII թագավորի մահից (1800 թ. դեկտեմբերի 28-ին) և Ռուսաստանի հետ Արևելյան Վրաստանի միավորումից հետո, բավականին նվազում է: Այդ իսկ պատճառով մելիքները և նրանց հպատակները սկսում են վերագառնալ Արցախ: Առաջինը օրինակ է ծառայել Մելիք-Ջումշուդը, որը «1805 թ. ծախել է Լոռին Վրաստանի լեռնային մասի կառավարից կոմս Մուսին-Պուշկինին 6000 ռուբլով եւ յուր հարազատների հետ վերադարձել Ղարաբաղ»¹⁴:

1806 թ. փետրվարի 8-ին Բաքվում, տեղի Հուսեին-Ղուլի խանի կազմակերպած դավադրության հետևանքով, սպանվում է Կովկասի կառավարչապետ իշխան Պավել Յիշիանովը¹⁵: Նրա սպանությունից հետո Անդրկովկասի մահմեդականներով բնակեցված շրջաններում բռնկվում են խռովություններ: Կառավարչապետի վախճանից հետո Անդրկովկասում տեղակայված ոռոսական զորքերի հրամանատարությունը ժամանակավորապես ստանձնում է գեներալ-մայոր Պյոտր Նեսվետակը:

¹² Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795–1797), աշխատավրությամբ Թ. Տիտանյանի, Երևան, 1981, էջ 97:

¹³ АКАК, т. I, Тифлис, 1866, с. 637.

¹⁴ Ե. Կալայան, Երկեր, հ. 3, Երևան, 2004, էջ 113:

¹⁵ Н. Дубровин, Закавказье от 1803–1806 года, СПб, 1866, с. 478–479; В. Потто, Кавказская война, т. 1. От древнейших времен до Ермолова, Москва, 2007, с. 257.

Օգտվելով ստեղծված քառսացին իրավիճակից՝ պարսից թագաժառանգ Աբրամ-Միրզայի գլխավորած զորքերը սկսում են մոտենալ Ղարաբաղի սահմաններին: Պարսկական բանակի զորաշարժերի մասին Մելիք-Ջումշուդը մի քանի իրար հաջորդող նամակներով տեղեկացնում է գեներալ Նեսվետակին:

«Իմոյս ողորմած, — գրում է նա, — հաստատ իմանաս, որ մինչի մայիսի ամսոյ 12-ում շահզարան գալոյ է Արամի ափն, որ կարմունջն շինեն, անցնեն Ղարաբաղս, զոր այս երկիրս էլ Առ նորին ամենաողորմածաբար կայսերական պօդան (Հպատակ — Ա. Մ.) է և ինքնակալ թագաւորի ողորմութիւն հասել է այս երկրիս վրէն, վասն որոյ պարտ է Խուստաց զօրքն կայ (գայ — Ա. Մ.) տեղս, որ թողեն ոչ Ղզլբաշն այս կողմս անցնել... և յայտ լիցի պայծառութեանդ, որ այս տարիս երկու թարափով (Կողմ — Ա. Մ.) է պատերազմունք լնելոյ՝ մէկն Ղարաբաղովս և միւսն Երևանով, բայց մեծ պատերազմունքն և շատ կոփին այս կողմովս կունի, այս տեղիս Խուստի զօրքն պէտք է, որ զօռով լնի, և թէ Շիրվանի ահվալաթին (իրավիճակ — Ա. Մ.) խաթր բերես՝ Աթայ խան կայ Շահսէվան եկալ է Խուստափայ խանի մօտ, էնտեղ խօսակցութիւն են արել, որ Բաքուայ Հուսէյին Ղուկի խանն կամ Շիխ Ալի խանն Խուստափայ խանի հետ կան Քուուի ափումն Մարաղալու Ահմադ խանի հետ կօրշմիշ ընեն (Հանդիպել — Ա. Մ.) և տեսնան, որ այս թարափովս շահզարան կայ Ղարաբաղս վրէն և այն կողմովն Շիրվանի խաներն կան: Կրկին յուսամ, որ մինչի Ահմադ խանն և Խուստափայ խանն մէկիս մէկն տեսնալն, մինչի Խուստաց զօրք հասուցանես, եթէ զօրքն տեղս հասնելն ուշացաւ՝ Ղարաբաղիս բանն շատ դժվարին կունի»¹⁶:

Իրավիճակը գնալով ահագնանում է, իսկ Մելիք-Ջումշուդի նամակները հետզհետե վերածվում են ուազմական թղթակցությունների: Օժտված լինելով նուրբ դիտողունակությամբ և ակնհայտ վերլուծական կարողություններով՝ նա կարողանում է ուստական իշխանություններին իրազեկել սպասվող պարսկական արշավանքի գլխավոր ուղղության մասին:

Նրա հաջորդ՝ 1806 թ. մայիսի 16-ին գեներալ Նեսվետակին ուղղած գրությունից ակնհայտ է դառնում, որ Մելիք-Ջումշուդը, որպես ուստական իշխանությունների լիակատար վատահությունը վայելող անձ, անպաշտոն առաքելություն է ունեցել հետևելու և նրանց հավաստի տեղեկություններ փոխանցելու Ղարաբաղում և նրա շուրջ ստեղծված իրավիճակի մասին:

«Արզովս յոյժ խոնարհաբար ծառայութիւն մատուցանեմ, — կարդում ենք նրա նամակում, — և յայտ առնեմ բարձր գերազանցութեանն ձերոյ, զոր թարեղաս (Ժամանակ — Ա. Մ.) յառաջ հանգուցեալ ողորմածահոգի կնեազ Յիցեանովն կենդանի ժամանակն այս Ղարաբաղիս ամենայն որպէսութիւնն և ահվալն հարցումն էր առ-

¹⁶ АКАԿ, т. III, д. 598, с. 328.

նում ինձնից, և ձերոյ պայծառութեանդ ես այս տարի Թիֆլիզ քաղաքում ժամանակն, որ կամենում էի տեղս գալն՝ ինձի հրամայեցիր Ղարաբաղի և Ղզլբաշի ինչ որ ա՞վալ իմանամ՝ ինձի գրես: Իմ ողորմած, վասն որոյ մինչի թարեղս երկու անգամ պայծառութեանդ գրած եմ տեղիս ամենայն որպէսութիւն, կարծեմ ստացած լինես»¹⁷:

Ոչ պակաս ուշագրավ է նաև գրության շարունակությունը, որտեղ արդեն խոսվում է պարսկական զորքերի Արաքսն անցնելու մտադրության մասին:

«Եւ այժմոյս, — շարունակվում է նամակում, — եթէ կամենասս տեղիս որպէսութիւնն և անցանքն հարցանել, յայտ առնեմ պայծառութեանդ, որ Ղզլբաշի մին փարայ (մաս — Ա. Մ.) զօրք Փիրզովի խանն վեր է առել եկել Արասխի ափումն է, և շահզատան էլ մեծ զօրքով մարդ եկաւ, թէ այս քանի աւուրս գալոյ է, որ անցնեն այս թարափս: Իմոյս ողորմած, հաստատ իմացիր, որ թէ Խուստի զօրքն շուտով մեզ չի հասաւ, Ղզլբաշն շուտով եկաւ Ղարաբաղս, հացն վշացրուց և ձեռաց դուրս եկաւ, էն ժամանակն Ղարաբաղիս հալն էլ է խարաբ (ավեր — Ա. Մ.) հացի կողմաց և Խուստի զօրքի բանն էլ շատ դժվարին կը լինի: Խնդրեմ աղերսանօք ձերոյ բարձր գերազանցութեանն, որ մինչի մայիսի վերջն Խուստաց զօրքն հասուցանես ի մեզ, որ Ղարաբաղի հացն ձեռաց դուրս չի գայ և խարաբ շինի կամ թողեն ոչ Ղզլբաշն այս կողմս անցնելոյ»¹⁸:

Խուստական զորքերը, սակայն, ուշանում են: Խսկ երբ պարսկական զորքերն անցնում են Արաքսը և մոտենում Շուշիին, հբրահիմ խանն այնտեղից հանում է իր ընտանիքը ու տեղափոխում բերդաքաղաքից շորս վերստ հեռավորության վրա գտնվող «Միրզա-Ալի բեկի սանգյար» (Միրզա-Ալի բեկի ամրություն) կոչվող վարը¹⁹: Խուստական պաշտոնական պատմագրությունը դա բացատրում է նրանով, որ «Ղարաբաղի խանին պարզապես ձանձրացրել էր ոռոսական կառավարության խնամակալությունը, որը յուրաքանչյուր քայլափոխի կաշկանդում էր նրա տիրական բնավորությունը, և նա որոշեց, որ Շուշիի կամավոր հանձնումը նրան կհաշտեցնի շահի հետ»²⁰: Սակայն, առավել հավանական է կարծել, որ հբրահիմ խանն ամենակի էլ անկեղծ չի եղել 1805 թ. մայիսի 14-ին իշխան Յիցիանովի հետ Քյուրակ-շայի պայմանագիրը կնքելիս, որով նա ընդունեց ոռոսական հպատակություն, այլ այդ քայլին է գնացել լոկ Գանձակի պարիսպների վրա սպանված Զավադ խանի ճակատագիրը շկսելու մտավախորությունից ելնելով, այլապես ահեղ կառավարչապետի մահից ընդամենը երեք ամիս անց չը բռնի տիրափոխության հանապարհը:

¹⁷ АКАК, т. III, д. 599, с. 328.

¹⁸ Նոյն տեղում:

¹⁹ Утверждение русского владычества на Кавказе, т. I, Тифлис, 1901, с. 240.

²⁰ Նոյն տեղում:

իբրահիմ խանի հետ էին նրա կանանցից մեկը, երկու անշափահաս տղաները և երկու գուստորերը, որոնց նախատեսում էր ամուսնացնել պարսից Ֆաթալի շահի երկու որդիների հետ: Այնուհետև նրան է միանում խանի որդի Մահմեդ Քասիմ աղան՝ իր ծառայողներով, ինչպես նաև Շուշիի բեկերի մի մասն ու քոչվոր թաթարների մի քանի խմբեր, որոնք սկսում են իրենց վրանների շուրջը ամրություններ կառուցել²¹: Այդպիսով, աստիճանաբար, Շուշիում տեղակայված ուսական փոքրաթիվ զորախմբի քիթի տակ հավաքվում է զինված թաթարների խառնիճաղանց մի բազմություն, որն, առնվազն, շատ կասկածելի դիրք էր բռնել:

1806 թ. սեպտեմբերի 4-ին գեներալ Նեսվետակին հղած իր հայտնի զեկուցագրում արդեն փոխգնդապետի կոչում ստացած կիսանկիշը գրում է, որ Շուշիից դուրս գալուց առաջ իբրահիմ խանը գաղտնի իր սուրհանդակ Նոր-Մամեդին ուղարկել է Ֆաթալի շահի մոտ՝ այն խնդրանքով, որպեսզի վերջինս ներում շնորհի նրան ուսական հպատակություն ընդունելու համար՝ խոստանալով, որ կկոտորի կամ իր տիրուպթներից դուրս կվոնդի ուսաներին, և շահից զորք է խնդրել դրա համար, ինչպես նաև խոստացել է իր երկու գուստորերին էլ կնության տալ շահի երկու որդիներին: Ֆաթալի շահն, իր հերթին, ներում է շնորհել նրան, համաձայնել իր որդիների համար կնության առնել խանի գուստորերին, խոստացել զորք ուղարկել նրան՝ իր տիրուպթներից ուսաներին դուրս քշելու համար, 120.000 ուսրի Թեհրանի դրամով, իսկ Ղարաբաղը՝ տալ նրա որդի Աբովլ Ֆետին²²: Հստ երևութին, հենց Ֆաթալի շահի հուսադրող պատասխանից հետո էլ իբրահիմ խանը հղացել է իր խորամանկ ծրագիրը:

Այնուհետև նույն փաստաթղթում կիսանկիշը գրում է, որ սահմանից այն կողմ ուղարկված հետախուզվներից ստուգ տեղեկացել է իբրահիմ խանի պահանջով պարսից զորքերի՝ Ղարաբաղ ուղևորվելու մասին, իսկ երբ զարաբաղցիները լսում են պարսիկների մոտենալու լուրը՝ նրանցից շատերը շտապում են Շուշի, որպես թշնամական հարձակումների դեպքում արդեն սովորական դարձած հուսալի ապաստան, սակայն խանը հանգստացնում է նրանց՝ ասելով, որ եկողներն իր զորքերն են: Նա նաև քոչվոր թաթարներին հրամայում է գնալ Շուշիի մերձակա լեռները, իսկ ուսական իշխանությունների դեմ ապստամբած իր որդի Աբովլ Ֆետին էլ կարգադրում է պարսիկների հետ գալ և միանալ նրանց²³: Կիսանկիշի հաղորդած տեղեկությունների իսկությունը հաստատում է նաև հայ պատմագիր Ներսեսովը, որը, մասնավորապես, գրում է. «Ժողովրդի մեջ նաև լուրեր էին պտտվում, թե իբր

²¹ Նովն տեղում, Աբովլ, երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1984, էջ 293:

²² АКАԿ, Т. III, д. 610, с. 334.

²³ Նովն տեղում:

Աբովլ-Ֆաթհ խանը ղզլբաշ զորքով նույնպես հբրահիմ խանի հրավերով էր Ղարաբաղ եկել²⁴:

Երբ հբրահիմ խանի դավաճանությունն ակնհայտ է դառնում մայոր Լիսաննեխի համար, վերջինս նրա մոտ է ուղարկում խանի որդուն՝ Մեհտի Ղուլի աղային և թուանը՝ Զաֆար Ղուլի աղային, իր մտադրությունից հետ կանգնելու և ընտանիքով Շուշի վերադառնալու պահանջով: Մկրտում վերադարձած Զաֆար Ղուլին հայտնում է, որ թեև մի քանի անգամ փորձել է համոզել խանին՝ հետ կանգնել պարսիկներից, սակայն նա միայն լուսանքներ է թափել ոռուսների հասցեին, և իր հերթին փորձել համոզել թուանը՝ իր տուն հրավիրել լիսաննեխին և բոնելով նրան՝ հանձնել իրեն: Վերջում Զաֆար Ղուլի աղան հավելում է, որ այդ գիշեր կամ խանը կգնա պարսիկների մոտ, կամ վերջիններս կմիանան նրան: Ավելի ուշ եկած Մեհտի Ղուլի աղան ևս հայտնում է, որ որքան էլ փորձել է տարհամոզել խանին՝ ոչինչ չի ստացվել և նա արդեն բացահայտ բռնել է պարսիկների կողմը²⁵: Ակնհայտ էր, որ հբրահիմ խանը կատարել էր իր վերջնական ընտրությունը, և ժամանակն էր, որ մայոր Լիսաննեխին էլ աներ իր վճռական քայլը:

Եվ ահա, այլ ելք շունենալով, նույն օրվա գիշերը մայորն իր հետ վերցնում է 100 եգերների և շրջանցիկ ճանապարհով գնում գեպի խանական ճամբարը: Լիսաննեխի պատմելով, առաջինը նրանց ուղղությամբ կրակ են բացում թաթարները և ծանր վիրավորում մի զինվորի, որը մի քանի օր անց ստացած վերքերից վախճանվում է: Այնուհետև մայորը հրամայում է կրակ բացել խոռվարարների ուղղությամբ, ինչի հետևանքով էլ գիշերային մթության և խառնաշփոթի մեջ հբրահիմ խանն իր մերձավորների հետ սպանվում է²⁶: Իր գեկուցագրի վերջում լիսաննեխը հավելում է, որ եթե «հբրահիմ խանն այդ գիշեր որպես դավաճան շտանար իր արժանի պատիժը, ապա հաջորդ օրը Շուշիի բերդը պաշարվելու էր պարսիկների և Ղարաբաղի դավաճանների կողմից»²⁷:

Լիսաննեխի հաղորդած տեղեկությունների խկությունը լիովին հաստատում է նաև Մելիք-Ջումշուդը՝ 1806 թ. մայիսի վերջին գեներալ-մայոր Նեսվետակին ուղած իր երրորդ նամակում: «Արզովս յոյժ խոնարհաբար ծառայութիւն մատուցանեմ, — կարդում ենք փաստաթղթում, — և յայտ առնեմ բարձր գերազանցութեանն ձերոյ, զոր եթէ կամենաս տեղիս որպէսութիւն և անցանքն հարցանել, որոյ թարեղումս հբրահիմ խանն ճանապարհից դուրս եկաւ և մեծի կայսերական ծառայութիւնն խափանեց. Ղզլբաշի հետ խօսակցութիւն արաւ, Ղզլբաշի զօշուններն բերեց մօտացրուց, որ ինքն էլ գնայ Ղզլբաշի մէջն՝ միատեղ գան բերթիս չորս դոլն առնեն:

²⁴ Միրզա Յոսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 92:

²⁵ АКАК, т. III, д. 610, с. 334.

²⁶ Նույն տեղով, էջ 335, **П. Бобровский**, *История 13-го лейб-grenадерского Эриванского Его Величества полка за 250 лет*, ч. 3. Егеря (1786–1816), СПб, 1893, с. 245.

²⁷ АКАК, т. III, д. 610, с. 334.

իմոյս ողորմած, այս կողմաս իւր որդի Մէհատի Ղուլի խանն և Զափար Ղուլի աղան ամենայն կերպիւ թագաւորին ծառայութիւն բաց չի թողեցին, երկուսան եկին բարեծնունդ Միտր Տիխինիշ մայեօրի սպասն, թէ մենք ողորմած թագաւորին ուղիղ սիրտով ծառայելոց եմք և մենք որշափ մեր հայր Իբրահիմ խանի հետ ասեցինք, թէ այդ մէկ բան չի մի անիլ և թագաւորին լաւ ծառայէ չի լինում, այսուհետև հրամանք ձերն է, որպիսի մեծի կայսերական և ձերոյ զանուն (օրենք – Ա. Մ.) և սալահն (նպատակահարմարություն – Ա. Մ.) է այնպէս արա, իմ ողորմած, հաստատ իմացիր, որ մաեօրին էլ շարայ (ելք – Ա. Մ.) չի ունէր այն գիշերն, որ գնէր ոչ իբր իբրահիմ խանի վրէն, առաւօտն Նզլբաշի զօրքն գալոյ էր, որոյ ինքն էլ գնայ մէջն և իբրահիմ խանն էլ իւր տուն զալիցս գուրս էր բերել, վասն որոյ մայեօրն մին փարայ Ռուսատի զօրքով գիշերն գնաց իբրահիմ խանի վրէն և խառնակութիւն էլած ժամանակն իբրահիմ խանին գուլով (գնդակ – Ա. Մ.) տուելին և քանիցս մարդ էլ իւր ամալիցն (ծառայողներ – Ա. Մ.) սպանել էին»²⁸: Այս նամակը իբրահիմի սպանությունից անմիջապես հետո գրված առաջին փաստաթուղթն է:

Մելիք-Ջումշուդն իբրահիմ խանի սպանությանը ևս մեկ անգամ անդրադարձել է 1806 թ. գեկտեմբերի 2-ին Թիֆլիսից Ս. Պետերբուրգ՝ Մինաս Լազարյանին հղած իր հայտնի նամակում: «Պարսիկը լսելով զմահն քնիազ Յիցիանովին, — գրում է նա, — բազմաթիւ զօրօք ընդ յառաջընթացութեամբ Աբաս Միրզայ որդոյն Բաբախանի (Ֆաթալի շահ – Ա. Մ.), արտուրանօք ժամանեցին ի Ղարաբաղ և միացան ընդ համայն տաճկաց անդ բնակելոց, և յառաջադրեցին սրախողիսողել զամենայն զօրս ոռուստաց և հայոց յամրոցն գտանելոց, առ որ համաձայնէր և տիրապետողն իբրահիմ խան, որով ընկալաւ պատիժս ըստ արժանույն»²⁹:

Այն, որ իրականում իբրահիմ խանի արարքը բացարձակ դավաճանություն էր ոռուսական պետության հանդեպ, հանգամանորեն գրում է նաև հայ պատմագիր Ներսեսովը. «Քանի որ իբրահիմ խանը շատ ծեր էր, հաճախ նրա գլխում խելահեղ մտքեր էին ծագում: Այս ընթացքում իր մի քանի մերձավորների հետ գաղտնի որոշում է ղզլբաշների պետությանը հպատակություն հայտնել: Նուշի բերդից գուրս գալով նրա ստորոտում գտնվող Մանզլար-խան կոշված վայրում խփում է իր վրանը, որպեսզի ղզլբաշների բանակի ժամանելուն պես նրանց միանա, ոռուսական պետությանը դավաճանի (ընդգծումը մերն է – Ա. Մ.) և այդ կերպ դառնա շահի օրինավոր հպատակը... Այս պատճառով մայոր Լիսաննիշը, որը հայտնի էր «գելում մայոր» («խենթ մայոր» – Ա. Մ.) անվամբ, 1806/1221 թ. մայիսի 8-ի³⁰ գիշերը 100

²⁸ АКАК, т. III, д. 600, с. 329.

²⁹ Կիւան հակոց պատմութեան, գիրք Ե, Դանիէլ Կաթողիկոս (1800–1808), Թիֆլիս, 1902, էջ 495, ոռուս բարգմ. տե՛ս ՄՄ, Կարողիկոսական դիվան, թղթ. 19, վավ. 135, *При соединение Восточной Армении к России. Сборник документов*, т. I, Ереван, 1972, с. 392:

³⁰ Իբրահիմ խանի սպանության ամարիկը Ներսեսովի մոտ սխալ է նշված, պետք է լինի մայիսի 27-ին, ինչպես գրում է ոռուս ուղղմական պատմաբան, գեներալ-լեյտենանտ Պ. Բորցովսկին (տե՛ս Պ. Բօրօվսկի, սկզ. соч., с. 245):

գինվորներով բերդից դուրս գալով՝ հբրահիմ խանի վրանը շորս կողմից շրջապատում են ու նրան՝ իր մերձավորների հետ, տեղում կոտորելով՝ ամրոց վերադառնությամբ³¹: Այսպիսով, ողջ կյանքի ընթացքում այլոց համար խարդավանքի սարդուտայններ հյուսած հբրահիմ խանը, ի վերջո, կործանվեց սեփական խարդավանքների սարդուտայնում:

Իբրահիմ խանի փոխարեն Ռուսաստանի կայսր Ալեքսանդր I-ի 1806 թ. սեպտեմբերի հրովարտակով Ղարաբաղի խան է նշանակվում նրա որդի Մեհտի Ղուկի աղան³²: Ինչպես իրավացիորեն նկատում է Լեոն, վերջինս «հորից ժառանգել էր նրա ամբողջ խորամանկությունը, երկդիմությունը, ուխտանենգությունն ու անգիտությունը»³³: Պատահական չէ, որ Մելիք-Ջումշուդը 1807 թ. մարտի 18-ին կովկասի կառավարչապետ ի. Վ. Գուգովիշին հղած մի ուշագրավ նամակում նրան զգուշացնում է շվատաճել նորանշանակ խանին: «Արգովս յոթ խոնարհաբար ծառայութիւն մատուցանեմ և յայտ առնեմ առ նորին պայծառափայլութեան ձերոյ, — կարդում ենք մելիքի նամակում, — զոր թուրք ազկի զինչ որ խոսակցութիւն ունեն՝ ողջ բնաւ սուստ է, որպէս Մէհտի Ղուկի խանն. իմոյս ողորմած թագաւոր, եթե Շուշի ղալաս կամ Ղարաբաղու երկիրս Մէհտի Ղուկի խանի ձեռացն էլաւ, որ նայ լին իշխօղ՝ հասդադ իմացիր, որ նորայ է հթիբար (վստահություն – Ա. Մ.) չի ունի, թէպէտ գիրշունեմ ձեռացս, բայց այսպէս են ասում, թէ Մէհտի Ղուկի խան զգլբաշի յետ խոսակցութիւն ունի կամ երեսելի էլ նմանապէս է երեսում կամ մենք և զինչ որ հայ քրիստոնեայ ազկ կան այս երկրում լսում ենք թուրքերիցն, թէ գրաֆն (ի. Վ. Գուգովիշը – Ա. Մ.) հրամայել է, որ տեղիս ոռս զօրքն տուրս կայ. համարիր թէ ի մէջն լուսոյ անկենք ի մէջն խաւարի. բոլոր քրիստոնէից ազկն մնացել են ի մէջի տաքնապի և ի տարակուսանաց, տիւ և գիշեր աղօթելով աղաչում առ բարերարն Աստուած: Իմ ողորմած տէր, եթէ այս երկրիս իշխօղն Մէհտի Ղուկի խան էլաւ, պարտ է որ ոռուսի զօրքն պերթիս մէջումն շատ լին՝ մինչևի ջծ (600) և էծ (700) մարթ, և թէ Մէհտի Ղուկի խանն տարէք քաղաքդ, մէկ ուրիշ է հթիբարլու (վստաճելի – Ա. Մ.) մարթ պէտի այս երկրիս իշխօղ, որով նայ լնելոյ յետ Գ (3) և Դ (400) սալդաթ ղալիս մէջն պահելոյ կողմայ պաւական է, թէ չէ Ղալումս ոչինչ ոռուստի զօրք չի էլաւ՝ հասդադ իմացիր, որ Ժ (10) աւոր չի անցնել, որ զգլբաշի զօրքն կուկան Ղարաբաղս կամ Ղալիս մէջն կու լցվեն և Ղարաբաղս զգլբաշի ձեռն անկնելոյ յետ Գանջու, Շամսադինու կամ Ղազախին դաթարում չի լիլ և կամ զինչ որ քրիստոնէից ազկ կայ՝ ողջն սուր կու քաշեն և գերի կու տանենա՝³⁴: Ի վերջո, ինչպես և սպասելի էր, Մէհտի Ղուկի խանը ևս դավաճանեց ոռուսական իշխանություններին և 1822 թ. փախավ Պարսկաստան, իսկ Ղարաբաղի խանությունը վերացվեց:

³¹ Միրզա Յոսուֆ Ներսեսյան, նշվ. աշխ., էջ 92-93:

³² АКАК, Т. III, д. 613, с. 336.

³³ Լեոն, նշվ. աշխ., էջ 296:

³⁴ Присоединение Восточной Армении к России, т. I, с. 403-404.

Այդ կապակցությամբ շափազանց դիպուկ է արտահայտվել Իաֆֆին, որը գրում է. «Ծուաները Ղարաբաղի մելիքների ջանքերով տիրելով Ղարաբաղին, նույն մելիքների վաղեմի թշնամի իբրահիմ խանին թողեցին որպես այդ երկրի գլխավոր կառավարիչ: Իբրահիմ խանը դավաճանեց ոռուսներին և սպանվեցավ: Նրա տեղը նշանակեցին դավաճանի մեծ որդի Մեհտի խանին, ավելի ընդարձակ իրավունքներով. դա ևս ավելի մեծ դավաճանություն գործեց. 1822 թվին Ղարաբաղից փախավ Պարսկաստան և, պարսից զորքերի հետ վերադառնալով, սկսեց պատերազմել ոռուսների հետ: Անհասկանալի է, թե նույն ժամանակվա ոռուսաց պաշտոնակալները ի՞նչ էին գտնում այդ նենգավոր խաների մեջ, որ նրանց գերադասում էին հայոց մելիքներից, որոնք ամենայն զոհաբերությամբ անձնատուր էին եղած Ռուսաստանին»³⁵:

Ամփոփելով նշենք, որ եղած փաստերի վերլուծությունը միանշանակ բերում է այն հետևողական, որ իբրահիմ խանը պատրաստվում էր դավաճանել ոռուսական պետությանը և միանալ գեպի Շուշի արշավող պարսկական բանակին, ինչի համար էլ սպանվեց մայոր Դ. Լիսանելիշի կողմից:

Մայոր Լիսանելիշը, որպես Շուշիում տեղակայված ոռուսական զորախմբի հրամանատար, գործել է ստեղծված պայթյունավտանգ իրավիճակի համապատասխան, քանի որ անգործության կամ հապաղման գեպում վտանգելու էր նախ և առաջ իր և իր ենթակայության ներքո գտնվող զինվորների կյանքը:

Ինչ վերաբերում է Մելիք-Ջումբուդին, ապա իբրահիմ խանի մտագրության մասին մալոր Լիսանելիշին իրազեկելու նրա քայլը Խամսալի մելիքությունների ողբերգությունից դասեր քաղած և խորը հետևողական արած մարդու արարք էր, որը բոլոր հիմքերն ուներ չվստահելու իբրահիմ խանին:

ARTAK MAGHALYAN

ON THE KILLING OF IBRAHIM-KHAN OF KARABAKH

Keywords:

Ibrahim-khan, Major D. T. Lisanevich, Melik-Jumshud, Melikdoms of Artsakh (Armenian Melikdoms of Artsakh-Karabakh), Karabakh Khanate, P. Tsitsianov, I. Gudovich, Abbas-Mirza, Mehti-Ghuli-khan, high treason.

On 8 February 1806, Prince Pavel Tsitsianov, Commander of the Russian troops in the Caucasus, was assassinated in Baku. After that, riots broke out in Muslim-

³⁵ Իաֆֆի, նշվ. աշխ., էջ 556:

inhabited regions of the South Caucasus. Taking advantage of the chaos, the Persian army led by Crown Prince Abbas-Mirza started advancing towards the borders of Karabakh.

When the Persian army crossed the Araxes and approached Shushi, Ibrahim-khan of Karabakh moved his family from Shushi to a place called “sangyar (fortification) of Mirza-Ali-bek” located some 4 miles away from the Shushi fortress.

At night on 27 May 1806, while attempting to join the Persian army, Ibrahim-khan of Karabakh was killed by the Russian army Major D. T. Lisanovich, who had been informed about Ibrahim's treacherous intentions from Melik Jumshud Melik-Shahnazaryan of Varanda.

Our analysis of the available facts leads to an unambiguous conclusion that Ibrahim-khan was going to betray the Russian Empire and join the Persian army advancing towards Shushi; that is why he was killed by Major Lisanovich.

As the Commander of the Russian troops located in Shushi, Major Lisanovich acted in line with the actual explosive situation; otherwise, in the event of his inaction or delay, he would expose himself and his subordinate soldiers to a serious danger.

As to Melik Jumshud, who informed Major Lisanovich about Ibrahim-khan's treacherous intentions, his actions were compelled by the tragedy of the Melikdoms of Khamsa (the union of the five Armenian Principalities of Artsakh-Karabakh) and the bitter lessons that made him distrust Ibrahim-khan.

АРТАК МАГАЛЯН

К ВОПРОСУ ОБ УБИЙСТВЕ КАРАБАХСКОГО ИБРАГИМ-ХАНА

Ключевые слова: Ибрагим-хан, майор Д. Лисаневич, Мелик-Джумшуд, ме-ликовства Арцаха (армянские княжества Арцаха-Карабаха), Карабахское ханство, П. Цицианов, И. Гудович, Аббас-Мирза, Мехти-Кули-хан, государственная измена.

После убийства в Баку главнокомандующего русскими войсками на Кавказе князя Павла Цициanova 8 февраля 1806 года, в районах Закавказья, населенных мусульманами, начались беспорядки. Воспользовавшись возникшим хаосом, персидские войска во главе с наследником престола Аббас-Мирзой начали продвижение к границам Карабаха. Когда персидская армия, перейдя

Аракс, приблизилась к Шуши, карабахский Ибрагим-хан переселил свою семью из Шуши в местность под названием “сангяр (укрепление) Мирзы-Алибека”, находящуюся в четырех верстах от Шушинской крепости.

Ночью 27 мая 1806 года, во время попытки присоединения к персидским войскам, Ибрагим-хан был убит майором русской армии Д. Лисаневичем. О предательском намерении Ибрагим-хана Лисаневичу сообщил варандинский Мелик-Джумшуд Мелик-Шахназарян.

Анализ имеющихся фактов приводит к однозначному выводу о том, что Ибрагим-хан собирался изменить Российскому государству и присоединиться к персидским войскам, наступавшим на Шуши, за что и был убит майором Лисаневичем.

Как командующий российскими войсками, расквартированными в Шуши, майор Лисаневич действовал в соответствии с создавшейся взрывоопасной ситуацией, поскольку в случае бездействия или промедления мог бы создать опасность для себя и подчиненных себе солдат.

Что касается Мелика-Джумшуда, уведомившего майора Лисаневича о предательском намерении Ибрагим-хана,— этот шаг был продиктован трагедией Меликств Хамсы (союза пяти армянских княжеств Арцаха) и горькими уроками, которые извлек мелик, имевший все основания не доверять Ибрагим-хану.